

Ինեսա Գ. Դանիելյան

Երևանի պետական համալսարան

inesadanielian@gmail.com

ORCID 0009-0008-0829-5225

**ՄՈՄԻԿԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝
(ըստ հիշատակարանների և արձանագրությունների)***

Ամփոփում

Հոդվածը նվիրված է հայ միջնադարյան գրիչ, մանրանկարիչ, ճարտարապետ և քանդակագործ Մոմիկի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրությանը: Վարպետի կենսագրության վերականգնումը հենված է ձեռագրերում պահպանված հիշատակարանների, եկեղեցիների ու տապանաքարերի արձանագրությունների վրա՝ սկսած նրա անվան առաջին հիշատակությունից (1283–1284 թթ.), մինչև նրա 1333 թ. հիշատակի խաչքարը:

Հոդվածի երկրորդ բաժնում քննարկվում են Մոմիկի կյանքի առանձին դրվագները՝ նոր մեկնաբանություններով և մի շարք հիպոթեզներով: Այսպես՝ 1287 թ. Թեղենյաց վանքում գրիչ Դավթի մի ձեռագրում Մոմիկի հիշատակությունը հնարավորություն է տալիս ենթադրելու, թե՛ ձեռագրի հնարավոր թալանը, և թե՛ վարպետի գերեվարությունը: Մենք չենք բացառում Մոմիկին առևանգելու հավանականությունը: Այս ենթադրությունը բխում է այն փաստից, որ հայ քարագործ վարպետները միջնադարում մեծ համբավ են ունեցել և աշխատել են նաև մահմեդական իշխողների համար: Նմանատիպ օրինակ է Մոմիկի ժամանակակից ճարտարապետ Շահիկը, որը կառուցել է մահմեդական դամբարաններ Խաչեն–Դորբաթլիում և Երևանում:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 15.12.2025: Այս հետազոտության ընթացքում ցուցաբերած արժեքավոր խորհրդատվության և աջակցության համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լ. Չուգասզյանին, բժշկական գիտությունների թեկնածու Դ. Կարապետյանին, բանասիրական գիտությունների թեկնածու Խաչիկ Հարությունյանին, լուսանկարիչ Հրայր Բազդեանին:

ՎԷԻ համահայկական հանդես, ԾԷ (ԻԳ) տարի, թիվ 4 (92), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2025

Հոդվածում դիտարկվում է նաև Մոմիկի 1331 թ. հիշատակարանում (Եյլի համալսարան, Arm. 3) առկա կենսագրական անհամապատասխանությունների խնդիրը: Այդ հիշատակարանում վարպետը հայտնում է, որ աչքերի հիվանդության պատճառով չի կարողացել ավարտել ձեռագիրը: Տարածված է գիտական այն կարծիքը, թե Մոմիկի տեսողությունը մասնակիորեն կորել էր, որի հետևանքով նա թողել էր մանրանկարչությունը և զբաղվել քանդակագործությամբ ու ճարտարապետությամբ: Սակայն նման մեկնաբանությունը մեզ հիմնավոր չի թվում, քանի որ Մոմիկի խաչքարերին բնորոշ քանդակագործական նուրբ աշխատանքը աչքերի նույնքան լարում էր պահանջում, որքան մանրանկարչությունը: Հավանական է, որ Մոմիկը հիվանդ է եղել աչքի շաղկապետու վարակիչ հիվանդությամբ (տրախոմա), որը տարածված էր միջնադարյան Հայաստանում: Սա առավել հավանական է դառնում, եթե հաշվի առնենք, որ նա քարագործ վարպետ էր, և աշխատանքի ընթացքում փոշին կարող էր լրջորեն վնասել նրա աչքերը: Այս համատեքստում մենք առաջարկում ենք հիշատակարանի նոր ընթերցում, որտեղ գործածված «սակաւ ամաց» արտահայտությունը նպատակահարմար է հասկանալ ոչ թե «մի քանի տարի անց», այլ՝ «որոշ ժամանակ» կամ «ամիսներ անց» իմաստով: Իսկ 1331 թվականը վերաբերում է ոչ թե վարպետի տեսողության վերականգնմանը, այլ միայն հիշատակարանի գրության տարեթվին:

Բանալի բառեր – Մոմիկ, Նորավանք, Գլաձոր, խաչքար, հայկական մանրանկարչություն, ճարտարապետ, հիշատակարան, անավարտ ձեռագիր, գերի, աչքերի հիվանդություն:

Inesa G. Danielyan

THE LIFE AND WORKS OF MOMIK (according to the colophons and inscriptions)

Abstract

The article focuses on the study of the life and work of the Armenian medieval master - scribe, miniaturist, architect and sculptor Momik. The master's biography has been reconstructed thanks to memorial records in manuscripts and

epigraphic inscriptions. This study reconsiders certain episodes from his life in a new light and offer hypotheses. In the colophon of scribe David of 1287 (Teghenik Monastery), a mention of Momik allows one to hypothesize both the plundering of his manuscript and the capture of the master himself. This can be explained by the fact that Armenian stonecutters and artisans were well-known and even worked for Muslim rulers, such as the contemporary architect to Momik - Shahik, who built Muslim mausoleums in Khachen-Dorbatli and Yerevan. Notably, the Church of Holy Mother of God in Yeghvard built by Shahik in its architectural structure, closely resembles the Church of Burtelashen in Noravank.

Based on the colophon from 1331 (Yale University, Arm. 3), where the master writes that he was unable to complete the manuscript due to an eye disease, specialists suggest that his vision had been partially lost, and as a result, he could no longer work as a miniaturist instead focusing on sculpture and architecture. We find this opinion unconvincing, as the intricate work of creating the fine details of Momik's khachkars required just as much eye strain as miniature art. We believe that Momik developed an eye disease trachoma, which was widespread at the time, especially considering that Momik was a stone worker, and dust and dirt could have severely damaged his eyes. The phrase "սուլսու սուսոց" in the text should be understood not as "several years later," but as "after some time or months," and the year 1331 refers not to the restoration of his eyesight but to the year the memorial inscription was written.

Key words - Momik, Noravank, Gladzor, khachkar, Armenian miniature, architect, unfinished manuscript captive, an eye disease.

Инесса Г. Даниелян

ЖИЗНЬ И ТВОРЧЕСТВО МОМИКА

(по колофонам и эпиграфическим надписям)

Резюме

Статья посвящена исследованию жизни и творчества армянского средневекового мастера-писца, миниатюриста, архитектора и скульптора Момика. Биография мастера реконструирована благодаря памятным записям в манускриптах и эпиграфическим надписям, начиная с первого упоминания в 1283-1284 гг. и до увековечивания его имени на памятном хачкаре в 1333 г.

Во второй части статьи мы представили отдельные эпизоды его жизни и свои предположения по трактовке этих событий. Упоминание о Момике в манускрипте, переписанном писцом Давидом в 1287 г. в монастыре Техеник, позволяет предположить, что произошло расхищение манускрипта, а также пленение самого Момика. Это, можно объяснить тем фактом, что армянские каменщики-ремесленники были весьма известными и даже работали на мусульманских правителей, такие, к примеру, как современник Момика архитектор Шахик, построивший мусульманские мавзолеи в Хачене-Дорбатли и в Ереване.

В статье также рассматриваются биографические несоответствия, присутствующие в колофоне Момика 1331 г. (Йельский университет, Агм. 3), где мастер рассказывает, что не смог завершить манускрипт из-за болезни глаз. Исходя из содержания текста, специалисты предполагают, что его зрение было частично потеряно, и поэтому он не мог более заниматься миниатюрой, и переключился на скульптуру и архитектуру.

Однако нам не представляется убедительным это мнение, поскольку ювелирная изысканность работы Момика при создании хачкаров требовала не меньшего напряжения глаз, чем создание миниатюр. Мы склонны считать, что у Момика развилась болезнь глаз, известная как трахома, которая была распространена в то время, особенно если учесть, что Момик был мастером, работавшим с камнем, и пыль и грязь могли существенно повредить его зрение.

Мы также полагаем, что слово «սակավանդ» [sakavamac] в его памятной записи следует понимать не как «через несколько лет», а как «через некоторое время или месяцы», а 1331 г. относится не ко времени возвращения его зрения, а к году написания памятной записи.

Ключевые слова: Момик, Нораванк, Гладзор, хачкар, армянская миниатюра, архитектор, памятные записи, незаконченная рукопись, взятый в плен, болезнь глаз.

Մուտք

Մումիկը հայ միջնադարյան արվեստի ամենանշանավոր արվեստագետն է, որ ստեղծագործել է Վայոց Ձորում 13-րդ դարի վերջին տասնամյակներից մինչև 14-րդ դարի 30-ական թվականները: Մումիկի անվան հետ են կապված հայ միջնադարյան ճարտարապետության գոհարներ Նորավանքը ու Արենիին, իսկ նրա կերտած խաչքարերը կատարողական վարպետության և պատկերագրական առումով հայ խաչքարագործութ-

յան գագաթնակետն են: Մանրանկարչության արվեստում ևս վարպետը իր գործի հնուտ մասնագետ է ներկայացել, ինչպես նաև գրչագրել է ձեռագրեր, որոնցում արտահայտել է իր շնորհքը գեղագրության ասպարեզում: Մոմիկն այն եզակի արվեստագետներից է, որի տաղանդը բարձր է գնահատվել ինչպես նրա ժամանակակիցների կողմից, այնպես էլ դրանից հետո: Արվեստագետի համբավն այնքան մեծ է եղել, որ չի շրջանցել անգամ բանահյուսությունը՝ արժանի տեղ զբաղեցնելով ժողովրդական ավանդագրույցներում (Ղանալանյան, 228): Մոմիկի արվեստի հովանավորներն էին Սյունիքի Օրբելյան իշխանական տան անդամները: Օրբելյան գերդաստանի իշխանները, տարածաշրջանում տիրող մոնղոլ խանից ստանալով ինչուսական իրավունք, իրենց ձեռքն էին վերցրել երկրամասի աշխարհիկ և հոգևոր իշխանությունը՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ գիտության, արվեստի ու մշակույթի զարթոնքի համար:

Մոմիկի կենսագրությունն ու ստեղծագործությունները մշտապես եղել են գիտնականների ուշադրության կենտրոնում՝ սկսած Ղևոնդ Ալիշանից (Ալիշան, 1893, 181-182, 195; Հովսեփյան, 1913, 4; Ղաֆադարյան, 1945, 11-12)¹: Հատկապես XX դարի 50-ական թվականներից սկսյալ տարբեր գիտնականներ ուսումնասիրել և հրապարակել են նրա գլուխգործոցները՝ ձեռագրեր, խաչքարեր, եկեղեցիներ (Բարխուդարյան, 1963, 78-86; Ավետիսյան, 1971, 49-80; Аветисян, 1956, 67-82, Ավետիսյան, 1956, 100-117; Քիրտեան, 1947, 216-218; Մնացականյան, 1968, 219-228; Քյուրդյան, 1969, 203-204; Մնացականյան, 1982, 149-179; Մաթևոսյան 2010; Հասրաթյան 1984; Մաթևոսյան, Զաքարյան, 2010): Մասնագետները ուսումնասիրել են ոչ միայն վարպետի անունը կրող աշխատանքները, այլ նաև նրան են վերագրել մի շարք ստեղծագործություններ՝ ելնելով նրա ստորագիր գործերի հետ ունեցած ընդհանրություններից: Մեզ հասած ձեռագրային հիշատակարանների և արձանագրությունների վրա հենվելով՝ ստորև կներկայացնենք բազմաշնորհ արվեստագետի կենսագրությունը:

¹ Ղևոնդ Ալիշանը անդրադարձել է Մոմիկի քանդակագործական աշխատանքներին՝ հիշատակելով Արենիի Սբ. Աստվածածին եկեղեցին և Թամթա խաթունի 1308 թ. պատվերով կանգնեցված խաչքարը: Գ. Հովսեփյանը առաջինն էր, ով անդրադարձել է Մոմիկի ձեռագրերին՝ 1292 թ. Ավետարանին: 1945 թ. Կ. Ղաֆադարյանի Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությանը նվիրված աշխատության մեջ հիշատակվում է վարդապետ Մոմիկի 1321 թ. կառուցած Արենիի Սբ. Աստվածածին եկեղեցին:

1. Մոմիկի անվան հիշատակությունները ձեռագիր մատյաններում և արձանագրություններում

Մոմիկի անունն առաջին անգամ հանդիպում է 1283–1284 թթ. Գլաձորում բաբունապետ Ներսես Մշեցու պատվերով գրված ձեռագիր մի ժողովածուում (Վիեննա, Մխիթարյան միաբանության մատենադարան, հ^մ 571): Այս մատյանի խորաններից մեկում պահպանվել է Մոմիկի մասին հիշատակությունը. «ԶՄոմիկ նկարիչ խորանիս հիշեցեք աղաչեմ», ինչից պարզ է դառնում, որ 24 ա թերթի նկարազարդումը կատարել է Մոմիկը: Այն հանգամանքը, որ Մոմիկի անունը հիշատակվում է Գլաձորում ընդօրինակված այս մատյանում, հիմք է տվել գիտնականներին իրավացիորեն ենթադրելու, որ Մոմիկը եղել է, ժամանակակիցների կողմից «Երկրորդ Աթենք» բնորոշումը վայելած Գլաձորի համալսարանի սան: Հաշվի առնելով, որ Գլաձորի համալսարան ընդունվելու համար սաների երեսին պետք է «մորուք բուսեալ լիներ» (Խաչերյան 1973, 173), ուրեմն Մոմիկը 1283–1284 թթ. գրեթե 17–18 տարեկան կլիներ, ուստի՝ ծնված մոտավորապես 1265 թ.: Ս. Մնացականյանը Մոմիկի ծննդյան հավանական տարեթիվն է համարում 1267–ը և դրանից ոչ ուշ (Մնացականյան, 1968, 220)²:

Մոմիկի անվան հաջորդ հիշատակությունը հայտնվում է 1287 թ. Թեղենյաց անապատում Դավիթ գրչի ընդօրինակած, սակայն մեզ չհասած մի Ավետարանի հիշատակարանում: Այս մատյանը 19–րդ դարավերջին բարեխտաբար տեսել և հիշատակարանն արտագրել է ականավոր հոգևոր գործիչ, բանասեր, ձեռագրագետ Ղևոնդ Փիրղալեանյանը (ՄՄ 6273, էջ 50բ–51ա) (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: ԺԳ դար, 1984, 601)³: Հիշատակարանում պահպանվել են հետևյալ չափածո տողերը.

***«Իսկ սատրանայ խափան եղեւ բազմադիմի,
Զի գառաջին փառսն սրանչելի,
Նկարագրեալ Մոմիկ գրչի
Գեղաղէշ եւ պիպանի
Պիղծ հարամիք փարան գերի»:***

² 2010 թ. ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը կազմակերպել էր գիտաժողով՝ նվիրված Մոմիկի ծննդյան 750-ամյակին՝ վարպետի ծննդյան տարեթիվը համարելով 1260 թվականը:

³ Այն ձեռագրերը, որոնք պահվում են Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, այսուհետ կգրենք ՄՄ:

Հիշատակարանը մեզ հայտնում է, որ Մոմիկի սկսած գործն անավարտ է մնացել: Բովանդակությունից այնքան էլ պարզ չէ, թե արդյոք Մոմիկը Թեղենյա՞ց վանքում է եղել, այնտե՞ղ է սկսել Ավետարանի «նկարագրությունը», և ապա այն կիսատ է մնացել, թե՛ Դավիթ գրիչն է եղել Վայոց Ձորում և արձանագրել իրողությունը: Նաև հասկանալի չէ, թե Դավթի գրած և Փիրղալենյանի տեսած նո՞ւյն ձեռագրի մասին է խոսքը, թե՛ գրիչը պատմում է Մոմիկի սկսած և այդպես էլ անհետ կորած մեկ այլ մատյանի մասին: Թեղենյաց վանքը եղել է միջնադարյան Հայաստանի հոգևոր, մշակութային կարևոր կենտրոններից մեկը: Այստեղ 13-րդ դարի կեսերին գործունեություն են ծավալել Վանական Վարդապետը, Գևորգ Սկևռացին, Վարդան Արևելցին: Հայտնի է, որ Գլաձորի համալսարանը համագործակցել է նաև այլ դպրոցների հետ, ինչպես Բջնիի և Թեղենիքի Գրիգոր րաբունապետի դպրոցները (Սարգսյան 2020, 52): Արձանագրվել են դեպքեր, երբ Թեղենիքից եկած գրիչները ձեռագիր են սկսել ընօրինակել Գլաձորում, ապա այն տեղափոխել և ավարտին հասցրել Թեղենյաց վանքում (Պետրոսյանց, 1977, 49-50): 1302 թ. Գլաձորում սկսված և Թեղենիքում ավարտին հասցված մի մատյանում վանքի առաջնորդ է հիշատակվում Դավիթը: Այս անունը նաև հիշված է Թեղենիքում 1295 թ. մի ձեռագրում, որտեղ Դավիթ կրոնավորը ավարտում է կիսատ մնացած Ավետարանը (Պետրոսյանց, 1982, 127; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: ԺԳ դար, 1984, 769): Արդյոք այս երեք հիշատակությունների Դավիթը միևնո՞ւյն անձն է, դժվար է ասել՝ չնայած վայրի և ժամանակի զուգադիպությանը: Այնուամենայնիվ, ՄՄ 6273 ձեռագրի այս արժեքավոր վկայությունը դարձյալ մատնանշում է Թեղենյաց վանքի և Գլաձորի միջև սերտ համագործակցությունը: Այս հիշատակարանի բովանդակության քննությունը բացահայտում է մի շարք այլ հարցեր, որոնց մենք հանգամանակից անդրադառնալու ենք հոդվածի երկրորդ բաժնում՝ Մոմիկի՝ մեզ հասած գործերը ժամանակագրական կարգով ներկայացնելուց հետո:

Մոմիկի ստորագրությամբ հաջորդ հատորը 1292 թ. Նորավանքում գրված և նկարագրված Ավետարանն է (ՄՄ 2848), որի պատվիրատուները Թադեոս և Հովհաննես քահանա եղբայրներն են: Ավետարանը Նորավանքում Մոմիկի ընդօրինակելուց հետո պատվիրատու եղբայրներն այն տարել են Ուռո քար՝ Սբ. Գևորգի եկեղեցի: Ուռո քարը գտնվել է Վայոց Ձորում՝ Խոտակերաց կամ Քարկոփի վանքի մոտ (Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան, 2001, 202): Այս մատյանում Մոմիկի թողած հիշատակարանը տեղեկություններ է հաղորդում այն մա-

սին, որ նա հոգևոր ծառայության մեջ է եղել որպես սարկավագ (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: ԺԳ դար, 1984, 677-679), սակայն հետագա հիշատակություններում ոչինչ չկա նրա՝ քահանա ձեռնադրվելու և հոգևորական սանդղակով բարձրանալու մասին: Այս հիշատակարանից իմանում ենք, որ Մոմիկի ուսուցիչն է եղել Հովասափ կուսակրոն քահանան, ով ամենայն հավանականությամբ միևնույն անձն է, որ 1292 թ. Գլաձորի համալսարանի ընդունապետ Եսայի Նչեցու համար ընդօրինակել է «Մեկնություն գործոց առաքելոց» ձեռագիրը (ՄՄ 1363), և, գուցե, նույն Հովասափի 1324 թ. տապանաքարն է գտնվում Նորավանքում (Մաթևոսյան, 2017, 196): ՄՄ 2848 մատյանի հիշատակարանում, թերևս, առավելագույն կերպով արտացոլված են Մոմիկի՝ Գլաձորի համալսարանում բարձրագույն ուսում ստանալու ապացույցները: Այս Ավետարանի էջերից մեկում (149 ա), Մոմիկը թողել է իր անվանումը հունարեն, ինչը հուշում է, որ բազմաշնորհ վարպետը տիրապետել է հունարեն լեզվին (Մաթևոսյան, 2025, 30; Խաչերյան, 1965, 193-194)⁴: Հիշատակարանում Մոմիկը գրում է. *«եւ քարեյորդոր փութով սրիպեաց գրկարութիւն սպիկար քարտուղարիս Մոմիկ կոչեցելոյ, դրոշմել ի քարտեանի զգիծ եւ զնկար զաստուածեան քառասաջ վրակացն հոսմունս, որք մշտասահ կայլակաք կենսիրաւէր պայմանսս գկիպիկոն ձեւ եւ դեմեպրէի ռոռգեալ դաշնատրեցին, եւ հրեղէն կաթլաքն լուծին զհիւսիսային խարաշունչ սադոցն դառնադաժան կարծրութիւնն խավարամած բնութեանս, եւ զարնան ընդոսր որոյմամբ հարաւասիք աղով սաղարպատրեալ պրդաբերեցին զանրասարանս ոգւոց, այսինքն զաւերասպարում մարեանս չորից աւերարանչացն Մարթէի, Մարկոսի, Դուկայ եւ Յոհաննոս»*: Ինչպես տեսնում ենք այս շարադրանքում, նկարագրելով Ավետարանի պտղաբեր ներգործությունը՝ Մոմիկը հիշատակում է հունական դիցաբանության Դեմետրեին՝ պտղաբերության հովանավորուհուն: Հայտնի է, որ Գլաձորի համալսարանում ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրվում էր հունական դիցաբանությունը՝ որպես առանձին առարկա (Խաչերյան, 1973, 100-101):

Համալսարանական առարկաները սերտելու հետքերից մեկն էլ Մոմիկի՝ գրչության տարեթիվը մանրակրկիտ ներկայացնելն է: Հայտնի է, որ 11-րդ դարից Հովհաննես Սարկավագի տոմարագիտական երկերը,

⁴ Հունարեն իմանալը զարմանալի չէ, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ Մոմիկը Գլաձորի համալսարանի սաներից էր: Համալսարանի հիմնադիր Ներսես Մշեցին, որ հունական կրթություն ուներ և բարձր էր գնահատում հունական կրթական համակարգը, տիրապետում էր մի քանի լեզուների: Այս առումով թերևս պատահական չէ նաև համալսարանի ստացած տիտղոսը՝ «Երկրորդ Աթենք»:

ֆու (Հակոբ Մելիք-Հակոբյան, 1835-1888թթ.) մոր՝ Ջեյրան խանումի տապանաքարի վրա արձանագրված է. «ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ԶԵՐԵԱՆ ՄԱՅՐ ԲԱՖՖՖԻ ԺԻԻ ԾՆԵԱԼ 1819 Թ.: ՎԱԽՃԱՆԵԱԼ 1904 Թ. ՀՈՎՏԵՄԲԵՐ 23ԻՆ»⁶: Ինչպես պարզվում է, Բաֆֆու մայրն իր որդուց երկար է ապրել, և նրա տապանաքարը կերտվել է մեծանուն գրողի մահից 16 տարի անց (Բաֆֆին մահացել է 1888 թ.):

Մոմիկի ստեղծագործության հերթական հատորը 1302 թ. Սյունյաց Մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի պատվերով նկարազարդած Նոր Կտակարանն է (ՄՄ 6792) (Մանուկյան, 2011, 49)⁷, որը հայտնի է նաև «Պատերազմի Ավետարան» անունով (Ավետիսյան 1971, 56; Մաթևոսյան, 2010, 22)⁸: Ձեռագրի գրիչը Հովհաննես Օրբելն է՝ Լիպարիտ իշխանի որդին, ով Ստեփանոս Օրբելյանի կյանքի վերջին տարիներին արդեն Սյունյաց հաջորդ մետրոպոլիտ էր օծվել⁹: Այս փոքրիկ մատյանը (12x8,5 սմ) ամենայն հավանականությամբ Ստ. Օրբելյանը պատվիրել է իր անձնական գործածության համար (Մաթևոսյան, 2017, 206): Թեև հիշատակարանում նշված չէ գրչության վայրը, սակայն ենթադրվում է, որ այն ստեղծվել է Նորավանքում (Մաթևոսյան, 2017, 208-209), և Մոմիկը նկարել է Տերունական շարքի 12 թեմատիկ մանրանկարները: Ձեռագրի հիշատակարանում Մոմիկն արդարանալով իր գործի թերությունների համար՝ պատճառաբանում է, որ գործը կատարել է ձմռանը՝ ցուրտ և մույժ պայմաններում՝ «այլ ժամանակս ձմեռ էր և տունս նսես»¹⁰:

Մոմիկի անվան հիշատակությունը հանդիպում է դրանից երկու տարի անց՝ 1304 թ. խաչքարի արձանագրության մեջ: Ս. Բարխուդար-

⁶ Բաֆֆու մոր տապանաքարի լուսանկարը պահվում է Թեհրանի «Արտակ Մանուկյան» թանգարանի արխիվում, և արվեստագիտության թեկածու Իվեթ Թաջարյանը իրականացնում է թանգարանի արխիվի լուսանկարների ֆոնդի մշակումը:

⁷ Ըստ Ս. Մանուկյանի՝ այս ձեռագիրը Նոր Կտակարանի ընթերցվածների գիրք է՝ Լեկցիոնարիում, քանի որ սկսվում է Հովհաննեսի Ավետարանով և ոչ թե ընդունված կարգի համաձայն՝ Մատթեոսի գրքով:

⁸ 15-րդ դարում մատյանը պահվել է Պատերազմի Սբ. Նշան վանքում և ստացել «Պատերազմի Սուրբ Ավետարան» անունը: Ըստ Ա. Ավետիսյանի՝ ձեռագիրը մարդիկ իրենց հետ տարել են պատերազմ՝ նրանում հաղթության խորհուրդ տեսնելով, և այդ հանգամանքով է բացատրում ձեռագրի փոքր չափերը: Կ. Մաթևոսյանի կարծիքով՝ ձեռագրի փոքր չափերը պայմանավորված են նրանով, որ Ստեփանոս Օրբելյանն այն իր անձնական ընթերցանության համար է պատվիրել և, գուցե, գրպանում է պահել:

⁹ Հովհաննես Օրբելը Սյունյաց եպիսկոպոս է դառնում դեռևս Ստեփանոս Օրբելյանի կենդանության օրոք: 1300 թ. Նոր Զուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի մատենադարանում պահվող N 477 Ավետարանի էջերից մեկում (99 ա) նա ստորագրում է որպես արքեպիսկոպոս, արևելյան պոստոֆոնտես, այսինքն՝ հայոց արևելյան եպիսկոպոսների զլխավոր:

¹⁰ Կ. Մաթևոսյանի վկայությամբ՝ նման արդարացման որևէ այլ հիշատակարանում չենք հանդիպում:

յանի՝ այս խաչքարի արձանագրությունն ընթերցելու շնորհիվ հայտնի դարձավ, որ վարդպետ Մոմիկն է դրա հեղինակը¹¹: Ինչպես Ս. Բարխուդարյանն է նշում, սուկ քանդակագործ, խաչքարեր պատրաստող մասնագետին վարդպետի կոչումով չեն հիշատակել. վարդպետը խոսում է նախագծող, կառուցող, դեկավար ճարտարապետ լինելու մասին (Բարխուդարյան, 1963, 13–22, 81–82; Մաթևոսյան, 2017, 121): 1303 թվականին, երբ մահանում է Ստեփանոս Օրբելյանը, Մոմիկը Հովհաննես Օրբելի պատվերով խաչքար է կանգնեցնում Սյունյաց առաջնորդի հոգու փրկության համար: Խաչքարի վերնամասում պատկերված է Քրիստոսը՝ քառակերպյան գահին նստած: Խաչքարը վնասված է: Խաթարված է հատկապես դրա վերնամասի ամբողջականությունը: Ժամանակին այն գտնվել է Նորավանքի Սբ. Ստեփանոս Նախավկա եկեղեցու գավիթում, իսկ 1970-ական թվականներից՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում: Ս. Տեր-Ներսեսյանի 1977 թ. հրատարակած “L’art Arménien” գրքում խաչքարի վերատպության մեջ Քրիստոսի գլուխը և դեմքը դեռ ամբողջական պահպանված է (Der-Nersessian, 1977, 202, fig. 155), ցավոք, այժմ Տիրոջ կերպարն աղավաղված է, դեմքը պահպանվել է աչքերից ներքև:

Մոմիկի հաջորդ մեզ հայտնի խաչքարը կանգնեցվել է 1308 թ.: Պատվիրատուն Թամթա Խաթուն իշխանուհին է՝ Էլիկում Օրբելյանի կինը: Խաչքարը ձևված է Աթաբեկ Տարսայիճի հոգու փրկությանը և իշխանուհու որդիների՝ Բուրթելի և Բուղդայի արևշատությանը (Հովսեփյան, 1987, 220–223): Մոմիկի 3-րդ խաչքարի պատվիրատուն կրկին իշխանուհի Թամթա Խաթունն է, որտեղ թեև արձանագրությունը վնասված է, և Մոմիկի անունը չի պահպանվել, սակայն մասնագիտական կասկածից դուրս է նրա հեղինակ լինելու հարցը (Բարխուդարյան, 1963, 82, 25–26):

Ըստ ժամանակագրության Մոմիկը հիշատակվում է Արենիի Սբ. Աստվածածին եկեղեցու արևմտյան մուտքի արձանագրության մեջ՝ «Մոմիկ վարդպետ»: Արենին, որը նախկինում կոչվել է Արփա, միջնադարում քարավանային բանուկ ճանապարհի կարևոր հանգուցակետ է եղել, և Արփա գետի ձախ ափի բլրի գագաթի հարթակին 1321 թ. Մոմիկը Սյունյաց մետրոպոլիտ Հովհաննես Օրբելի պատվերով կառուցում է Սբ. Աստվածածին կենտրոնագմբեթ եկեղեցին: Եկեղեցու գմբեթը հենվում է մեկ զույգ մույթերի և Ավագ խորանի անկյունների միջև գցված կամարների (Հասարթյան, 2011, 8–12): Կառույցի արտաքին կերպարին

¹¹ Խաչքարի արձանագրությունը՝ ԵՄ ԱԲՊԷԼ [ՅՈՎՀԱՄԵՍ [ՍԻԲԵՅՅԻ, ԿԱՆԱԿԱԿԱԿԱԿԱՆ ԳԼՈՒԿԱԿԱԿԱՆ ԿԱՆԿԵՆ] Ի ՓՈՂԿՈՒԹ(ԻՒՆ) ՀՈՂԿ(ՈՐ) ՀԱԲՐՆ ԻՄ Տ(Է)Ր ՍՏԵՓԱՆՈՒՍԻՆ] ԹՎ(ԻՆ) Զ[ԾԳ] (1304), [ՍՈՂՍԻԿ ՎԱՐԴՊԵՏ:

առանձնահատուկ հմայք են հաղորդում գլխավոր մուտքի ճակատը հարդարող պատկերաքանդակը՝ ծաղկահյուս խորքի վրա գորգին բազմած Աստվածամայրը մանուկ Քրիստոսի հետ, արևելյան ճակատում խորանի խաչածն կից զույգ և դրանից վեր մեկ շրջանածն պատուհանները: Եկեղեցու ներքին հարդարանքը առավել պատկառելի են դարձնում գմբեթակիր կամարների անկյուններում չորս Ավետարանիչների խորհրդանշական բարձրաքանդակները: Ճակատաքարի ծաղկահյուս կոմպոզիցիայի և զույգ լուսամուտների ընդհանրությունը Տաթևի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հետ հիմք է տվել ճարտարապետ Ստ. Մնացականյանին Մոմիկ վարդպետին վերագրելու նաև Տաթևի եկեղեցու կառուցումը (Բարխուդարյան, 1963, 81–82, 13–22):

Ելլի համալսարանի գրադարանում (Beinecke Library of Yale University, Arm. 3) պահվող Ավետարանի հիշատակարանը Մոմիկի կյանքի խիստ հետաքրքրական և կարևոր դրվագի մասին է պատմում (Քիւրտեան 1947, 203–204; Der-Nersessian, 1973, 615, t. 2, p. 105; Մաթևոսյան. 2017, 218–223; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, Ա, 2018, 131–134; Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, Բ, 2020, 100)¹²: Այս մատյանի հիշատակարանը, որը 1331 թ. գրվել է անձամբ Մոմիկի ձեռքով, տեղեկացնում է, որ 1307 թ. աշնանը Մոմիկը և Պողոս վարդապետը երկու Ավետարան են սկսում Հովհաննես Օրբելի հրամանով: Սակայն Մոմիկը աչքերի տեսողության վատացման պատճառով այն չի հասցնում ավարտին: Գրչության թերի մասը լրացնում է Հովհաննես գրիչը (համաբարբառները և ձապաղացանկը), իսկ Թորոս Տարոնացին՝ «զուկենկարսն» (մանրանկարները): Այնուհետև տասնամյակներ անց՝ 1331 թ. Ստեփանոս-Տարսայիձի¹³ հրամանով Մոմիկը գրել է Ավետարանի ընդարձակ հիշատակարանը: Այս հիշատակարանից հայտնի է դառնում, որ վարպետի տեսողության հետ կապված խնդիրները երկար չեն տևում՝

¹² Մատյանը նախկինում գտնվել է ԱՄՆ -ում՝ Հարթֆորդի ձեմարան հիմնադրամի Հիշատակի գրադարանում (հ^ն 3): Այս ձեռագրի արժեքավոր հիշատակարանը դուրս է մնացել Լ. Խաչիկյանի 1950 թ. կազմած ԺԴ դարի ձեռագրերի հիշատակարանների ցանկից, և առաջին անգամ հրատարակել է Հարություն Քյուրոյանը, այնուհետև Ս. Տեր-Ներսեսյանն է համառոտ անդրադարձել այս Ավետարանի մանրանկարների ուսումնասիրությանը: Այս մատյանի ամբողջական հիշատակությունը՝ ներառյալ նախորդ հրատարակություններում բաց թողնված «Փառքի» հատվածը առաջին անգամ տպագրվել է Կ. Մաթևոսյանի Նորավանքի վիճագրերին և հիշատակարաններին նվիրված մենագրության մեջ և ապա ներառվել է 14-րդ դարերի հայկական ձեռագրերի հիշատակարաններին նվիրված լրացված հրատարակություններում:

¹³ Ստեփանոս-Տարսայիձը Սյունյաց նշանավոր իշխան Տարսայիձ Օրբելյանի և Արցախում Խաչենի մեծ իշխան Հասան Զալալի դուստր Մինա Խաթունի որդի Զալալի գավակն էր: Նա նույն թվականից՝ 1331 թ. հիշատակվում է որպես Սյունյաց մետրոպոլիտ, տե՛ս Գարեգին Ա. Կաթողիկոս, 1947:

«զկնի սակավ ամաց լոյս աչաց ինոց դարձաւ առ իս»: Վարպետը շարունակել է ստեղծագործել, բայց դատելով մեզ հասած աշխատանքներից՝ քանդակագործության և ճարտարապետության ոլորտներում: Ինչպես նշում է Կ. Մաթևոսյանը, հավանաբար Մոմիկի աչքերի տեսողությունը ոչ թե ամբողջությամբ կորել, այլ միայն թուլացել է, որի պատճառով նա չի կարողացել ավարտել խորաններն ու ցանկերը, ինչպես նաև աչքերի մեծ լարում պահանջող մանրանկարչության նուրբ գործը (Մաթևոսյան 2017, 214) :

14-րդ դարում Մոմիկի անվան վերջին հիշատակությունը նրա հիշատակի խաչքարի վրա է արձանագրված. («ԹՎ(ԻՆ): 22Բ: (1333) ՅԻՇԵԱ Զ(ԻԻՍՏՈ)Ս Ա(ՍՏՈՒԱ)Ծ ԶՍՈՄԿԱ ՀՈԳԻՆ և ՈՂՈՐՄԵԱ»¹⁴: Այս խաչքարը Նորավանքի վերականգնումից հետո տեղադրել են Բուրթելաշեն Սբ. Աստվածածին եկեղեցու հարավային կողմում, իսկ վերջին տարիներիս վնասվելուց պաշտպանելու նպատակով այն տեղափոխվել է Նորավանքում գտնվող Մոմիկի անվան թանգարան:

Մեծանուն արվեստագետի ճարտարապետական, քանդակագործական և գեղանկարչական այս ստեղծագործությունների մեջ միավորում են վարպետի ուրույն կնիքը և ոճը, նրա ձեռագիրը այս բոլոր բնագավառներում էլ նույնն է: Մոմիկին կամ նրա դպրոցին են վերագրվել նաև ճարտարապետական, քանդակագործական, մանրանկարչական ստեղծագործություններ: Հիմնական թեմայից չշեղվելու և նյութն ավելորդ անգամ չձանրաբեռնելու նպատակով՝ նրան վերագրվող ճարտարապետական և քանդակագործական մյուս ստեղծագործությունների վերաբերյալ կսահամանափակվենք միայն դրանց թվարկումով: Այսպես, վերոնշյալ խաչքարերից բացի Մոմիկին կամ նրա աշակերտներին է վերագրվում Նորավանքի 1332 թ. յուրահատուկ պատկերազրոյթամբ խաչքարը, որը ներկայացնում է քառակերպյան գահին բազմած Աստվածամորը մանկան հետ, իսկ ստորին մասում՝ Ադամին և Եվային՝ դրախտում (Պետրոսյան, 2011, 26–27): Ինչպես վերևում արդեն հիշատակեցինք, Մոմիկի ճարտարապետական ստեղծագործություններից միայն Արենիի Սբ. Աստվածածին եկեղեցին է, որ կրում է վարպետի անունը, սակայն Տաթևի Սբ. Գրիգոր եկեղեցին ևս, հաշվի առնելով Արենիի եկեղեցու հետ մի շարք ընդհանրություններ, իրապես կարող ենք դասել Մոմիկի աշխատանքների թվին: Մոմիկի անվան հետ անբակտելիորեն

¹⁴ Այս խաչքարը հայտանբերել է Ս. Բարխուդարյանը և նրա ընթերցմամբ Մոմիկի մահվան տարեթիվը 1339 թվականն է, որը և համընկնում է Նորավանքի Բուրթելաշենի կառուցման ավարտի հետ:

կապված է Բուրթելաշեն Սբ. Աստվածածին եկեղեցին, որի ճարտարապետն է ավանդաբար համարվում, թեև հիշատակություն չկա պահպանած դրա մասին: Բուրթելաշենի կառուցումն ավարտվել է 1339 թ., իսկ Մոմիկը մահացել է 1333 թ., ուստի վերջին տարիներին եկեղեցու կառուցման աշխատանքները եզրափակել է մեկ այլ վարդապետ: Մոմիկին են վերագրվել նաև Եղեգիսի Զորաց Սբ. Աստվածածին և Սպիտակավոր Սբ. Աստվածածին եկեղեցիների կառուցումը, Նորավանքի Սբ. Ստեփանոս նախավկա եկեղեցու գավիթի վերակառուցումն ու երկու բարավորների պատկերաքանդակները (Մնացականյան, 1982, 143-179): Ս. Բարխուդարյանը, ելնելով Նորավանքի Բուրթելաշեն եկեղեցու և Սպիտակավոր Սբ. Աստվածածին եկեղեցիների քանդակների ոճական ընդհանրությունից, նաև պատմական որոշ փաստերից, ենթադրում է, որ Մոմիկը կարող է լինել Սպիտակավոր եկեղեցու հեղինակը (Բարխուդարյան, 1967, 95), իսկ Նորավանքի Սբ. Ստեփանոս նախավկա եկեղեցու բարավորի քանդակների հարցի վերաբերյալ կան նաև տեսակետներ, որոնք մերժում են Մոմիկի՝ դրանց հեղինակը լինելու վարկածը (Мирзоян, 1982, 121-128; Դոնաբեդյան, 1979, 94-104):

Ձեռագրարվեստում Մոմիկի վրձինն վերագրվող մատյաններն են 1283 թ. Կեռան թագուհու պատվիրած ՄՄ 6764 Ավետարանը (Ավետիսյան, 1971, 75) և Մոսկվայում Ռուսաստանի պետական գրադարանի Վ. Դեսնիցկու հավաքածուի Ֆ. 439.23.5 Ավետարանը (Դանիելյան, 2016, 164-169; Даниелян, 2018, 280-286):

2. Դիտարկումներ Մոմիկի կենսագրության վերաբերյալ

Հետևելով Մոմիկի ստորագրած աշխատանքների ժամանակագրությանը՝ առաջին հայացքից թվում է, թե Մոմիկի ստեղծագործությունը բաժանվում է 3 փուլերի: Առաջին փուլում Մոմիկը զբաղվել է գրչությամբ և նկարչությամբ՝ մինչև 1307 թ., ապա խաչքարագործությամբ՝ մինչև 1312 թ. և կյանքի վերջին շրջանում դրսևորվում որպես նախագծող և կառուցող ճարտարապետ (1321 թ.): Բայց արդյոք այդպես է, արդյո՞ք Մոմիկը ձեռագրերի ստեղծման աշխատանքներին զուգահեռ չի զբաղվել նաև քանդակագործությամբ: Եթե Մոմիկը խաչքարեր կերտելու իր տաղանդը բացահայտած և դրսևորած չլիներ, արդյո՞ք Ստեփանոս Օրբելյանի հիշատակի խաչքարը՝ նման պատկառելի անձավորության անունը հավերժացնող կոթողը կվստահվե՞ր փորձառություն չունեցող վարպետի, կարծում ենք՝ ոչ: Դատելով խաչքարի անթերի կերտվածքից՝ կասկածից դուրս

է, որ գործ ունենք հնուտ, կարող և բացառիկ ճաշակով օժտված վարպետի ստեղծագործության հետ: Տարիների հնտության շնորհիվ՝ նա հայկական խաչքարագործությունը հասցրել է կատարելության: Իսկ Արենիի Սբ. Աստվածածին եկեղեցին՝ կառուցված 1321 թ., մի՞թե ճարտարապետի կառուցած առաջին և միակ եկեղեցին է: Ինչպես վերևում նշեցինք, գիտնականները ճարտարապետ և քանդակագործ Մոմիկի աշխատանքն են համարում նաև Տաթևի վանքի Սբ. Գրիգոր եկեղեցին (1295 թ.), Նորավանքի Բուրթելաշենը (1339 թ.), Եղեգիսի Ջորաց եկեղեցին (14-րդ դար), Սպիտակավոր Սբ. Աստվածածինը (1321 թ.): Այս աշխատանքներից և ոչ մեկի վրա հայտնաբերված չէ վարդպետի արձանագիր անունը, սակայն դրանք, անշուշտ, աղերսներ ունեն նրա ստեղծագործությունների հետ և կրում են միևնույն գեղարվեստական կնիքի դրոշմը: Այնպես որ 1304 թ. Ստեփանոս Օրբելյանի հիշատակի խաչքարը վարդպետ Մոմիկի առաջին աշխատանքը չէր կարող լինել: Ինչպես Կ. Մաթևոսյանն է նշում «Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները» աշխատության մեջ, Մոմիկի ծնողների 1298 թ. տապանաքարի վրա Մոմիկի անվան հիշատակությունը վկայությունն էր այն բանի, որ հայրենի գավառում նա արդեն մեծ հռչակ էր վայելում, որը ոչ այնքան ձեռագրարվեստի աշխատանքի շնորհիվ էր, որքան Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի հանձնարարությամբ եկեղեցու կառուցման (Մաթևոսյան, 2017, 49): 1295 թ. Տաթևի Սբ. Գրիգոր եկեղեցու ճարտարապետական և քանդակային հարդարանքը, որը շատ ընդհանրություններ ունի ավելի ուշ՝ 1321 թ., Արենիի Սբ. Աստվածածին եկեղեցու հետ, իրավացիորեն հիմք են տվել գիտնականներին Մոմիկին համարել Տաթևի Սբ. Գրիգոր եկեղեցու հեղինակ (Մնացականյան, 1982, 151-152): Ս. Բարխուդարյանը նկատում է, որ Մոմիկը արվեստի յուրաքանչյուր բնագավառի ստեղծագործությունների վրա համապատասխան ձևով է ստորագրում: Այսպես, ձեռագիր նկարագրող մատյաններում նա գրիչ և ծաղկող է, իսկ խաչքարերի և եկեղեցու արձանագրություններում՝ վարդպետ (Բարխուդարյան, 1963, 82-83): Քանի որ 1304թ. խաչքարում Մոմիկն իրեն անվանում է «վարդպետ», ուրեմն նա սոսկ խաչքարեր կազմող և քանդակող մասնագետ չէր, այլ ճարտարապետ էր և, հետևաբար այդ գործում նա արդեն դրսևորված է եղել, որն իրավունք է տվել նրան այդպես ստորագրելու: 1304 թ. խաչքարը, ինչպես նաև վարդպետի կերտած հաջորդ խաչքարերը հիրավի հիացնում են իրենց ժանյակի նրբությամբ, բազմաշերտ, տարբեր խորություններ ունեցող քանդակագարդերի ու պատկերաքանդակի հնուտ կատարմամբ: Ելնելով վերոնշյալից՝ մենք համարում ենք, որ Մոմիկը գրչության և ման-

րանկարչության արվեստով զբաղվելուն զուգահեռ նաև քանդակագործության և ճարտարապետության հմտություններն է զարգացրել, ինչն էլ հանգեցրել է նրան, որ իրեն են վստահել Սյունյաց Մետրոպոլիտի հիշատակի խաչքարի պատասխանատու պատվերը:

Մոմիկի անվան հետ կապված 1287 թ. վերոնշյալ հիշատակարանը ևս մտորումների առիթ է տալիս: Ինչու՞ պետք է ավազակները առևանգեին Մոմիկի անավարտ ձեռագիրը, որի միայն առաջին տառերն էին նկարագրված: Կողոպտիչների համար շատ ավելի շահավետ կլիներ գողանալ ավարտուն մի ձեռագիր, որի դիմաց հետո փրկագին կպահանջեին: Մյուս կողմից, ձեռագրերը գրվելուց և նկարագարողվելուց հետո են նոր միայն կազմել (Գևորգյան, 1991), ուստի եթե անավարտ մատյան էր, ապա այն պետք է որ դեռ կազմված էլ չլիներ: Վանքը կամ գրչատունը կողոպտելու դեպքում հավանական է, որ այլ ձեռագրեր ևս կլինեին, այդ թվում և ավարտունները, որոնք պետք է որ թալանած լինեին «հարամիները»՝ մեծագույն վնաս պատճառելով: Այդ մասին, սակայն, Դավիթ գրիչը տարօրինակ կերպով իր չափածո հիշատակարանում լռում է՝ սահմանափակվելով սոսկ Մոմիկի անավարտ ձեռագրի հիշատակմամբ՝ ընդ որում այդ բոթը նա հայտնում է իր գլխավոր հիշատակարանի սկզբում: Բացի այդ, եթե վանքի վրա համընդհանուր հարձակում լիներ, ապա Դավիթ գրիչը պետք է որ հիշատակեր այդ մասին, այլապես տպավորությունն այնպիսին է, որ «թիրախավորված» հարձակում է: Ինչու՞ Դավիթն իր գրչագրած Ավետարանի հիշատակատանի սկզբում մեզ պետք է տեղեկացներ մեկ ուրիշի գրած մատյանի գերեվարման մասին: Ուստի այս թեմայի հարցում արժանահավատ ենք համարում Մաշտոցյան Մատենադարանի լուսահոգի ավանդապահ, պ.գ.դ. Գ. Տէր-Վարդանեսանի կարծիքը, համաձայն որի՝ խոսքը ոչ թե մատյանի, այլ հենց Մոմիկի առևանգման մասին է: Հիշատակարանում Դավիթ գրիչը գերի տանողներին անվանում է «պիղծ հարամիք», այսինքն՝ «անտուրբ ավազակներ» (Ղազարյան, Ավետիսյան, 2009, 413): Ովքե՞ր կարող էին նրանք լինել: Հավանաբար, ոչ քրիստոնյա, գուցե մահմեդական թշնամիները: Այդ դեպքում նրանք ի՞նչ պատճառով պետք է Մոմիկին գերի տանեին: Վերը մենք նկատեցինք, որ, վստահաբար, Մոմիկը մանրանկարչությանը զուգահեռ նաև քարագործ վարպետի փորձառությունն է ունեցել: Հայտնի է, որ հայ քարագործ վարպետները մեծ համբավ են ունեցել նաև օտար ժողովուրդների մոտ: Պատմության մեջ պահպանվել է տեղեկություն 12-րդ դարում Տյուրքսի ամրոցի վերականգնման գործում Անտիոքից հայ վարպետ (ինժեներ) Ավետիքի մաս-

նակցության վերաբերյալ, իսկ վենետիկցիների հետ Կիլիկյան Հայաստանի արքայի կնքած առևտրային պայմանագրով դադարեցվում է վենետիկցիների կողմից հայ քարագործ վարպետների առևանգումն ու նրանց շահագործումը վենետիկյան շինությունների կառուցման գործերում (Халпахьян, 1961, 134; Драпан, 2000, 25): Հայազգի ճարտարապետի՝ օտարի համար կառուցելու մեկ այլ օրինակ է Շահիկ վարդպետի կերտած՝ Երևանի Աբովյան փողոցում (1319 թ.) և Արցախի Ասկերանի շրջանում Խաչեն-Դորբատլիի (1314 թ.) մահմեդական դամբարանները (Քորթոշյան, 2020), նույն վարդպետ Շահիկի, որ Եղվարդի Սբ. Աստվածածին նշանավոր եկեղեցին է կառուցել (1311-1321 թթ.) (Սարգսյան, 2008, 198-199): Շահիկի իրողությունը առանձնակի կարևոր նշանակություն ունի, երբ հայազգի վարպետը՝ անկախ կրոնական պատկանելությունից, ստեղծագործել է և՛ հայ, և մահմեդական բարձրաշխարհիկ անձանց համար: Անհրաժեշտ է ընդգծել, որ վարդպետներ Շահիկը և Մոմիկը ոչ միայն 14-րդ դարի հայ նշանավոր ճարտարապետներ են, այլև նրանց ստեղծագործությունները ևս ընդհանրություններ ունեն՝ նկատի ունենալով Եղվարդի Սբ. Աստվածածին և Նորավանքի Բուրթելաշեն Սբ. Աստվածածին կրկնահարկ եկեղեցիների հորինվածքը:

Եզրափակելով վերոնշյալը՝ սա ներկայացնում ենք որպես վարկած, որի ստույգ լինելն առայժմ ո՛չ հնարավոր է հերքել, ո՛չ էլ՝ հաստատել, քանի որ այն նոր լրացուցիչ փաստերի կարիք ունի, որոնք առայժմ բացակայում են: Զարմանալի է, որ իր այլ ձեռագրերի հիշատակարաններում Մոմիկը չի հիշատակում ո՛չ իր կորած ձեռագրի մասին, ո՛չ էլ առավել ևս իր՝ առևանգված լինելու: Թեև ձեռագրերի պատմության մեջ բազմաթիվ են մատյանների գերեվարման նախադեպերը (Հարությունյան, 2019, 144-158), ամեն դեպքում Դավիթ գրչի հիշատակարանի չափածո շարադրանքը չի արգելում մեզ ենթադրելու թե՛ մատյանի գերի ընկնելը, և թե՛ դրա հեղինակի:

Այսպիսով, Մոմիկի ստեղծագործությունը ըստ բնագավառների 3 փուլի բաժանելը՝ սկզբում գրիչ և նկարիչ, 1307-ից հետո՝ խաչքարագործ, ապա վերջին տասնամյակում՝ ճարտարապետ, կարող է այնքան էլ ստույգ չլինել: Բազմաշնորհ վարպետը այս երեք ասպարեզներում էլ աշխատել է գուգահեռ, պարզապես 1307 թ.-ից հետո, իր իսկ խոստովանությամբ, աչքերի հիվանդությունը ստիպել է հրաժարվել ձեռագրերի նկարագարդման գործից:

Անդրադառնալով Մոմիկի տեսողության վատացման մասին պատմող դրվագին, փորձենք պարզել, թե ի՞նչ հիվանդություն կարող էր դա

լինել: Լարված աշխատանքի պատճառով մանրանկարիչների տեսողությունը հաճախ էր վատանում, որի մասին վկայություններ ունենք հիշատակարաններում, բայց այդ խնդիրը սովորաբար ավելի մեծ տարիքում է առաջանում: Աչքերի տեսողությունից գանգատվել է 13-րդ դարի Կիլիկյան Հայաստանի Հռոմկլայի դպրոցի Հովհաննես մանրանկարիչը 1253թ. Ավետարանի հիշատակարանում (Ֆրիրի պատկերասրահ, հ^մ 44.17) (Sanjian, 1976, 274; Der-Nersessian 1963, 18-25): Նշանավոր մանրանկարիչ Մխիթար Անեցին 1338 թ. ձեռագրի հիշատակարանում իրեն անվանում է ծեր, իսկ աչքի լույսը՝ պակաս (Մինասյան, 2024, 134): 1307 թ. Մոմիկը մոտավորապես 42 տարեկան պետք է լիներ, ուստիև բնական ճանապարհով տեսողության վատացման համար նման տարիքը մի փոքր վաղ է: Ըստ Ելլի համալսարանի ձեռագրի հիշատակարանի ընթերցման՝ նրա աչքերի տեսողությունը վերականգնվել է 1331 թ., և նա գրել է Ավետարանի հիշատակարանը: Այսպես ստացվում է, որ Մոմիկը արդեն 60 տարին անց՝ գրեթե 66 տարեկան պետք է լիներ: Բայց, սովորաբար, հենց այս տարիքում է վատանում աչքերի տեսողությունը, ինչպես մեզ հաղորդում են ձեռագրերում պահպանված հիշատակարանները: 15-րդ դարի գրիչ Խաչատուր քահանան փաստում է, որ իր ծերության ժամանակ՝ 68 տարեկանում է գրել իր Գանձարանը և «աչքս վատատեսեալ էր», – գրում է նա (ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, 1967, 52-23): Եթե 1307 թ. աչքերի պատճառով Մոմիկը չի կարողացել ավարտին հասցնել իր գործը, ապա ինչպե՞ս բացատրել 1308 թ. Թամթա Խաթունի համար պատրաստած խաչքարը, դրանից հետո նույն իշխանուհու պատվիրած մյուս խաչքարը, որի վրա թեև Մոմիկի անունը չի պահպանվել, բայց ակնհայտ համապատասխանում է նրա ստեղծագործական ոճին և ստորագիր խաչքարերի գեղարվեստական սկզբունքներին: Կամ ինչպե՞ս բացատրել Արենիի Սբ. Աստվածածին քանդակագործ եկեղեցու կառուցումը... Այս հարցում տիրում է այն կարծիքը, որ Մոմիկի տեսողությունը միայն վատացել է: Վարպետի աչքերի խնդրի վերաբերյալ շրջանառվում է այն կարծիքը, որ Մոմիկի տեսողությունը մանրանկարչական լարված, հաճախ վատ լուսավորված պայմաններում աշխատելու պատճառով թուլացել է, որից հետո նա անցել է ավելի խոշոր ձևերի վրա աշխատելուն, ինչպես քանդակագործությունն ու ճարտարապետությունն է: Սակայն այս տեսակետի վերաբերյալ ներկայացնենք մեր նկատառումը: Մոմիկի խաչքարերն այնպիսի անթերի, ասեղնագործ ստեղծագործություններ են, որոնց իրականացումը կարծում ենք ոչ պակաս աչքերի լարվածություն կպահանջեր, քան մանրանկարչությունը: Ավելին, քանդակի

հետ աշխատանքի հետևանքով առաջացող քարի փոշին կարող էր վնասել տեսողությանը, իսկ հատող գործիքով քարին հարվածելու ժամանակ կարող էին մանր կտորները դիպչել աչքերին¹⁵:

1331 թ. հիշատակարանի տողերը շփոթեցնող են: Մոմիկը գրում է, որ Հիսուսին հուսալով՝ քիչ տարիներ անց աչքերի լույսը վերադառնում է իրեն 1331 թվին, և նա կազմում և գրում է մատյանի հիշատակարանը: Այս անհամապատասխանությունները ժամանակին Հ. Քյուրդյանին հիմք են տվել կարծելու, որ Մոմիկը Թամթա Խաթունի խաչքարը 1308-ից առաջ է պատրաստել, իսկ Արենիի Սբ. Աստվածածին եկեղեցին 1321 -ի փոխարեն 1331 (Քյուրդյան, 1969, 204): Սակայն այս գործերի վրա արձանագիր թվականը հստակ է, և կասկածից դուրս է դրանց ստույգ լինելը: Մոմիկի դեպքում աչքերի տեսողության վատացումը այնպիսի հիվանդության հետևանք էր, որը, փաստորեն, բուժման ենթակա է եղել, ինչի հաջող ավարտից հետո վարպետի վկայությամբ աչքերի լույսը վերադարձել է իրեն:

Միջնադարյան Հայաստանում տարածված աչքի հիվանդություններից էին գլաուկոման, տրախոման, կատարակտը, որոնց բուժման հարցերին իր աշխատանքներում բազմիցս անդրադարձել է դեռևս Մխիթար Հերացին (Վարդանյան, 2000, 97): Աչքի հիվանդությունները բուժելու միջոցներ են նկարագրված նաև հետագայում՝ Ամիրդովլաթ Ամասիացու գործերում (Ամիրդովլաթ Ամասիացի, 1940, 191-198), որ թեև ավելի ուշ շրջանի՝ 15-րդ դարի գործիչ է, սակայն նրա աշխատանքները հիմնված են նախորդող դարերի բժշկագիտության դեղամիջոցների և փորձառության վրա: Ամենևին բացառված չէ, որ Մոմիկի աչքերի վատացման պատճառը տրախոմա հիվանդությունն էր: Քանի որ 1304-ից մեզ հայտնի է նրա պատրաստած խաչքարը, հավանական է, որ քարի, փոշու հետևանքով կամ ոչ մաքուր ձեռքերով երեսին դիպչելիս բորբոքած լինեք աչքերը տրախոմա հիվանդությունով: Իր իսկ վկայությամբ՝ նրա հիվանդությունը բժշկվել է, որը խոսում է Արևելյան Հայաստանում բժշկության, այդ թվում՝ ակնաբուժության զարգացածության մասին: Ի դեպ, հայտնի է, որ Գլաձորի համալսարանում ուսումնասիրում էին բնա-

¹⁵ Այն ժամանակ, բնականաբար, չկային ներկայում կիրառվող պաշտպանիչ ակնոցները, ավելին, հայտնի չէ թե 13-րդ դարի վերջից Եվրոպայում կիրառվող օպտիկական ակնոցները երբվանի՞ց են սկսել մեզ մոտ կրել: Ինչպես բանավոր իր խոսքում նշեց արվեստագիտություն դոկտոր, պրոֆեսոր Լ. Չուգասոյանը, դատելով կիլիկյան մանրանկարչության խորանների հարդարանքում զարդանախշերի և մարդկային դեմքերի մանրակրկիտ կատարումից, կարելի է ենթադրել, որ կիլիկյան մանրանկարիչները իրենց աշխատանքում կիրառել են խոշորացնող ապակյա ոսպնյակներ:

կան գիտություններն ու բժշկությունը (Վարդանյան 2000, 131): Ուրեմն, ինչպես բացատրել հիշատակարանի այս անհամապատասխանությունը իրական փաստերի հետ: Կարծում ենք, որ այստեղ հիշատակարանն ընթերցելու մեջ է խնդիրը: Նախորդ հետազոտողները այն կարդացել են որպես «Յուսովն որ առ Յիսուս զկնի սակաւ ամաց լոյս աչաց ինոց դարձաւ առ իս ի թուիս 22 (1331), և գլխաբարակարանս արարի և գրեցի հրամանսս Կարապետ Սարսայիճին մականունն Կէր Սրեփանոսի որդոյ Ջալալին: Որ հրամանսս և արդեամբք մեծ պարոնին Բուրթէլին յայսմ ամի զարդարեաց զԱւերարանսս ոսկով և արծաթով ի մայրաքաղաքիս յԵղեգիս, ի նորավանսս, զոր իւրով ի նոր շինեալ եկեղեցի կարարեաց՝ յանուն Սրբուհոյ Աստուածածնին և Սրբոյն Նիկողայոսի և Քրիստոսի Սրբոյ» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, Բ 2020, 100): Առաջարկում ենք ստորակետը տեղադրել հետևյալ կերպ. «Յուսովն որ առ Յիսուս զկնի սակաւ ամաց լոյս աչաց ինոց դարձաւ առ իս, ի թուիս 22 (1331) և գլխաբարակարանս արարի և գրեցի հրամանսս Կարապետ Սարսայիճին մականունն Կէր Սրեփանոսի որդոյ Ջալալին»: Այսպես մենք անջատում ենք աչքերի լույսի վերադարձի կապը 1331 թվականի հետ և ստացվում է, որ 1331 թ. նա հիշատակարանն է արարել և գրել: Իսկ ինչպե՞ս բացատրել «սակաւ ամաց»-ը, եթե այդ դեպքից մեկ տարի անց՝ 1308-ին խաչքար է կերտել: 1307-ից մինչև 1331 թվականը երկարուձիգ 24 տարի է «զկնի սակաւ ամաց» համարվելու համար: Այս պարագայում առաջարկում ենք «ամ»-ը ոչ թե հասկանալ պարտադիր տարի իմաստով, այլ որպես ժամանակ կամ ամիս: Հայկազյան բառարանում վկայված է «ամ»-ի նաև «ժամանակ» նշանակությունը (Նոր բառգիրք հայկազեան լեզուի, 1836, Ա, 827): Հայտնի չէ նաև, թե ինչու է այդքան երկար ժամանակ՝ շուրջ 24 տարի հետաձգվել հիշատակարանի գրչությունը: Այս հարցի վերաբերյալ Կ. Մաթևոսյանը հետևյալ տեսակետն է հայտնում՝ ամեն գրիչ չէ, որ կարող էր կազմել աստվածաբանական գիտելիքներ պահանջող և գեղեցիկ շարադրանքով «Փառք», ուստիև շատերը պատրաստի կաղապարներ էին գործածում: Ըստ գիտնականի՝ պատահական չէ, որ այս մատյանի գրչությունից ու նկարագարդումից հետո երկար ժամանակ գլխավոր հիշատակարան չի գրվել, և ի վերջո հանձնարարվել է Մոմիկին, քանի որ նա կարող էր այդ գործն անել պատշաճ կերպով: Հատկանշական է, որ հիշատակարանի վերջում նա իր կատարած աշխատանքը բնութագրում է հետևյալ բառերով՝ «գլխաբարակարանս արարի և գրեցի» (Մաթևոսյան, 2017, 217): Նկատենք, որ հիշատակարանում վկայված է, որ 1331թ. Ավետարանը Բուրթել իշխանի հրամանով զարդարել են ոսկով և արծաթով: Այսինքն՝ մատյանն իր շքեղությամբ

գիր աշխատանքների մեկենասները եղել են Օրբելյան հռչակավոր իշխանական տան ներկայացացուցիչները՝ սկսած պատմիչ, աստվածաբան, հոգևոր գործիչ, Սյունիքի մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանից: Ստ. Բարխուդարյանը ակնարկում է, որ 1285 թ. Ստեփանոս Օրբելյանի՝ դեպի Կիլիկիա մեկնած շքախմբի կազմում կարող էր և լինել իրեն «քարտուղար» հիշատակած Մոմիկը (Բարխուդարյան, 1963, 80): Ստեփանոս Օրբելյանը 1297 թ. ավարտում է իր նշանավոր երկը՝ «Պատմություն նահանգին Սիսական» մեծարժեք աշխատությունը, որտեղ շարադրված է Սյունյաց աշխարհի եկեղեցական և քաղաքական ամբողջական պատմությունն ու աշխարհագրությունը: Աշխատությունը հիմնված է ոչ միայն հայ և օտար պատմիչների երկերի, այլև վավերագրերի՝ հայոց թագավորների և Սյունյաց իշխանների, Հայոց կաթողիկոսների և Սյունյաց եպիսկոպոսների նամակների, հրովարտականների, կալվածագրերի, ընծայագրերի, վիճական արձանագրությունների վրա: Բնականաբար այդ ամբողջ «արխիվը» ուսումնասիրելը դյուրին գործ չի եղել մետրոպոլիտի համար, և կարծում ենք, որ իրատեսությունից զուրկ չէ ենթադրելու, որ Մոմիկը կարող էր Օրբելյանների տան կամ պրոտոֆրոնտես մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի ատենադպիրը լինել:

Եզրակացություններ

Այսպիսով, եզրակացնում ենք, որ Մոմիկը զուգահեռաբար ստեղծագործել է արվեստի բոլոր ոլորտներում՝ գրքարվեստում, քանդակագործության և ճարտարապետության մեջ: Վարպետի հանձարն այնքան մեծ է եղել և անունը՝ այնքան նշանավոր, որ նրա գերդաստանի անդամների տապանաքարերի վրա շեշտված է Մոմիկի հետ նրանց ազգակցական կապը: Հնարավոր է, որ նրա տաղանդը և ստեղծագործական շնորհքը վարպետի առևանգման (կամ նրա անավարտ ձեռագրի յուրացման) պատճառ են հանդիսացել: 1287 թ. դպիր Դավթի կողմից գրված ձեռագրում Մոմիկի հիշատակությունը հնարավորություն է տալիս ենթադրել ինչպես նրա ձեռագրի թալանը, այնպես էլ վարպետի հնարավոր գերելարումը: Այս փաստը որոշ չափով բացատրվում է նրանով, որ հայ շինարար-արհեստավորները հայտնի էին իրենց վարպետությամբ և աշխատում էին նաև մահմեդականների համար:

Նորովի քննելով 1331 թ. ձեռագրի հիշատակարանը (Եյլի համալսարան, Arm. 3)՝ ենթադրում ենք, որ «սակաւ ամաց» արտահայտությունը պետք է հասկանալ ոչ թե «մի քանի տարի անց», այլ՝ «ժամանակ անց»

9. Мирзоян А. (1981), О двух рельефах монастыря Нораванк, *Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում, Զեկուցումների ժողովածու*, 3, Եր., с. 121-128.
10. Халпахьян О. (1961), Архитектура Киликийской Армении, «*Вестник истории Мировой культуры*», 1, с. 127-136.
11. Ալիշան Ղ. (1893), *Միասկան: Տեղագրություն Միսնեսց աշխարհի*, Վենետիկ-Ս. Ղազար:
12. Ամիրդովլաթ Անասիացի (1940), *Օգուր բժշկութեան*, խմբագրությամբ՝ Ստ. Մալխասեանցի, Եր., Արմֆան:
13. Ավետիսյան Ա. (1956), Գլաձորի մանրանկարչության դպրոցի հիմնադիր վարպետ Մոմիկը, *Էջմիածին: Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Սայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի*, թ., հատ. ԺԳ, 8-9, էջ 100-107:
14. Ավետիսյան Ա. (1971), *Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը*, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:
15. Բարխուդարյան Ս. (1967), *Դիվան հայ վիճագրության*, պրակ 3, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն:
16. Բարխուդարյան Ս. (1963), *Միջնադարյան Հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ*, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն:
17. Գարեգին Ա. Կաթողիկոս (1947), *Տարսայիճ Օրբէլեանի և Մինաս խաթունի սերունդը*, Այթիլիաս, Հրատարակչություն Կիլիկիոյ կաթողիկոսութեան:
18. Գևորգյան Ա. (1991), Ինչպե՞ս էին նկարազարդում ձեռագրերը, Եր., «*Բանբեր Երևանի համալսարանի*», 2, էջ 61-78:
19. Դանիելյան Ի. (2016), Մոմիկի մանրանկարչությունը Ռուսաստանի պետական գրադարանի ձեռագիր Ավետարանում (ֆ. 439.23.5)», ՎԷՄ *համահայկական հանդես*, 3 (55), էջ 164-179:
20. Դոնաբեդյան Պ. (1979), Նորավանքի քանդակագործական մի հուշարձանի ոճական առանձնահատկությունները և ստեղծման ժամանակը, «*Լրաբեր*», 10, էջ 94-104:
21. Խաչերյան Լ. (1965), Մատենագրական տեղեկություններ Գլաձորի համալսարանի մասին, «*Պատմա-քանասիրական հանդես*», 4, էջ 193-200:
22. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (1967), կազմ.՝ Խաչիկյան Լ., Մասն երրորդ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:
23. Խաչերյան Լ. (1973), Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ (XIII-XIV դդ), Եր., «Լույս» հրատարակչություն:
24. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ. (2001), Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 5, Եր., Երևանի Համալսարանի Հրատարակչություն:
25. *Հայերեն ձեռագրերի հիշարակարաններ: ԺԳ դար* (1984), կազմ.՝ Մաթևոսյան Ա., Եր., ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն:
26. *Հայերեն ձեռագրերի հիշարակարաններ, ԺԴ դար*, Ա (1301-1325թթ.) (2018) կազմողներ՝ Խաչիկյան Լ., Մաթևոսյան Ա., Ղազարոսյան Ա., Եր., Նաիրի հրատարակչություն:

27. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, Բ (1326-1350 թթ.) (2020), կազմողներ՝ Խաչիկյան Լ., Մաթևոսյան Ա., Ղազարոսյան Ա., Եր., Մատենադարան:
28. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե - ԺԲ դդ. (1988), կազմ.՝ Ա. Մաթևոսյան, Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:
29. Հասարակության Մ. (1984), Հայ ճարտարապետության և քանդակագործության նորահայտ հուշարձաններ Նորավանքում, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 8, էջ 57-68:
30. Հասարակության Մ. (2011), Մոմիկը որպես ճարտարապետ, *Մոմիկ-750: Հոբելյանական գիտաժողով՝ նվիրված Մոմիկի ծննդյան 750-ամյակին: Զեկուցումների ժողովածու*, Եր., էջ 8-12:
31. Հարությունյան Խ. (2019), Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Եր., Մատենադարան:
32. Հարությունյան Խ. (2018), Անձնանունները հայերեն ձեռագրերի հիշատակարաններում. 1. Նորահայտ անձնանուններ ԺԱ-ԺԳ դարերի հիշատակարաններից», *Բանբեր Մալենադարանի*, № 25, Եր., էջ 187-217:
33. Հովսեփյան Գ. (1913), Գրչութեան արուեստը հին հայոց մէջ, Գ, *Քարտէզ հայ հնագրութեան (Հայ գրի գիտի 1500-ամեակի առթիւ)*, Վաղարշապատ, Ելեքտրաշարժ տպարան ս. էջմիածնի:
34. Հովսեփյան Գ. (1987), *Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության*, Բ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:
35. Ղազարյան Հ., Ավետիսյան Հ., *Միջին հայերենի բառարան*, Եր., ԵՊՀ հրատ., 2009
36. Ղանալանյան Ա. (1969), *Ավանդապատում*, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:
37. Ղաֆադարյան Կ. (1945), *Ավանի երկղեզվյան ծածկագիր արձանագրությունը*, Եր., ՀՍՍԻ ԳԱ հրատարակչություն:
38. Մաթևոսյան Կ. (2010), *Մոմիկ*, Եր., Լեզալ Պլյուս:
39. Մաթևոսյան Կ. (2017), *Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները*, Եր., «Մուղնի» հրատարակչություն:
40. Մաթևոսյան Կ. (2025), *Գլաձորի համալսարանի պատմությունից*, Եր., «Մուղնի» հրատարակչություն:
41. Մաթևոսյան Կ., Զաքարյան Լ. (2010), *Մոմիկ մանրանկարիչ*, Ալբոմ – ուսումնասիրություն, Երևան, «Նաիրի» հրատարակչություն:
42. Մանուկյան Ս. (2011), Անվանաթերթերը Մոմիկի ծաղկած ձեռագրերում, *Մոմիկ-750: Հոբելյանական գիտաժողով՝ նվիրված Մոմիկի ծննդյան 750-ամյակին: Զեկուցումների ժողովածու*, Եր., ՀՀ ԳԱԱ Գիտություն Հրատարակչություն, էջ 49-58:
43. Մինասյան Թ. (2024), Գրիչ և մանրանկարիչ Մլխիթար Անեցու կյանքն ու ձեռագրական ժառանգությունը, *Բանբեր Մալենադարանի*, 38, Եր., էջ 133-145:
44. Մնացականյան Ս. (1968), XIV դարի հայ քանդակագործ, ճարտարապետ և նկարիչ Մոմիկը, «*Պատմա-քանասիրական հանդես*», 3, էջ 219-228:
45. Մնացականյան Ս. (1982), *Վարպետաց վարպետներ. Մանուել, Տրդատ, Մոմիկ*, Եր., ՀՍՍԱ ԳԱ հրատարակչություն:

46. *Նոր բառգիրք հայկազնան լեզուի* (1836): Երկասիրություն երից վարդապետաց յաշակերտությունէ Մեծին Մխիթարայ Աբբահոր Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիրմէլեան, Հ. Մկրտչի Ազերեան: հատ. Ա (Ա-Կ): Վենետիկ, Սր. Ղազար:
47. *Նոր բառգիրք հայկազնան լեզուի* (1837): Երկասիրություն երից վարդապետաց յաշակերտությունէ Մեծին Մխիթարայ Աբբահոր Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիրմէլեան, Հ. Մկրտչի Ազերեան: Հտ. Բ (Հ-Ֆ): Վենետիկ, Սր. Ղազար:
48. Պետրոյան Հ. (2011), Մոմիկի խաչքարերը, *Մոմիկ- 750: Հոբելյանական գիտա- ժողով՝ նվիրված Մոմիկի ծննդյան 750-ամյակին: Զեկուցումների ժողովածու*, Եր., ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատարակչություն, էջ 22-28:
49. Պետրոյանց Վ. (1977), Թեղենյաց վանքը և նրա առաջնորդները, *Էջմիածին: Պաշարձական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսության Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի*, 8, էջ 48-51:
50. Պետրոյանց Վ. (1982), Թեղենյաց վանքը իբրև մշակութային կենտրոն, «*Պարմա-բանասիրական հանդես*», 1, էջ 121-129:
51. Սարգսյան Գ. (2008), Վիմագրական էսքիզներ: Թվականի գրչության նորա- հայտ ձև, «*Պարմա-բանասիրական հանդես*», 2, էջ 94-119:
52. Սարգսյան Ս. (2020), Երեսունամյա Գլաձորի երեց նախորդը, *Регион и мир, Общественный институт политических и социальных исследований Черноморско-Каспийского региона*, N 4, Էր., էջ. 48-54:
53. Վարդանյան Ս. (2000), *Հայաստանի բժշկության պատմություն հնագույն ժա- մանակներից մինչև մեր օրերը*, Եր., Քննասէր հրատարակչություն:
54. Քալանթարյան Ա., Սարգսյան Գ., Մելքոնյան Հ. (2005) (1), Մոմիկյան նորա- հայտ հիշատակներ, «*Հայ արվեստ*», 3, էջ 28-30:
55. Քալանթարյան Ա., Սարգսյան Գ., Մելքոնյան Հ. (2005) (2), Նորահայտ հիշա- տակագրեր Մոմիկի տոհմի մասին, *Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու* 6, Եր., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ էջ 183-194:
56. Քյուրդյան Հ. (1969), ԺԴ դարու մանրանկարիչ Մոմիկի մասին, «*Պարմա-բա- նասիրական հանդես*», N 2, էջ 203-204:
57. Քիրտեան Յ. (1947), Դարձեալ Թորոս Տարոնեցի, «*Բազմալէս*», 9-10:
58. Քորթոշյան Ր. (2020), «Խաչեն-Դորբատլիի դամբարանի արաբերեն արձանա- գրությունը», *Վարձք, ՀՃՈԻՀ*, N 14, էջ 36-40:

Bibliography (Latin Script)

1. Avetisyan A. N. (1956), O khudozhnike Momike, *Teghekgagir hasarakakan gitut'yunneri*, N 2, pp. 67-82.
2. Danieljan I. G., (2018), Armjanskoe Chetveroevangeliie Rossijskoj gosudarstvennoj biblioteki (f. 439.23.5): Atribucija miniatjur, Aktual'nye voprosy teorii i istorii iskusstva VII. Sbornik statej, SPb, s. 280-286.
3. Drapyan I. R. (2000), *Toros Roslin*, Yerevan, izd-vo Tigran Mets.

25. Hasrat'yan M. (2011), *Momik'e vorpes chartarapet, Momik-750: Hobelyanakan gitazhoghov nvirvats Momiki tsnndyan 750-amyakin: Zekuts'umneri zhoghovatsu*, Yerevan, HH GAA gitut'yun hratarakch'ut'yun pp. 8–12.
26. Harut'yunyan Kh. (2019), *Hayeren dzeřagreri hishatakaraner*, Yerevan, Matenadaran.
27. Harutyunyan Kh. (2018), *Andznannerē hayeren dzeřagreri hishatakaranerum. 1. Norahayt andznanner ZhA-ZhG dareri hishatakaraneric*, Banber Matenadarani, № 25, Yerevan, pp. 187–217.
28. Hovsepyan G. (1913), *Grchut'yan arvestē hin Hayots' mej: Masn G, K'artez hay hngrut'yown (Hay gri gyuti 1500-amyaki art'y)*, Vagharshapat, Elektrasharj tparan s. Ejmiatsni.
29. Hovsepyan G. (1987), *Nyut'er yev usumnasirut'yunner Hay arvesti patmut'yan*, B, Yerevan, HSSR GA hratarakch'ut'yun.
30. Ghazaryan H., Avetisyan H. (2009), *Mijin hayereni bařaran*, Yerevan, EPH hratarakch'ut'yun.
31. Ghanalanyan A. (1969), *Avandapatum*, Yerevan, HSSR GA hratarakch'ut'yun.
32. Ghafadaryan K. (1945), *Avani yerklezyvyan tsatskkagir ardzanagrut'yunē*, Yerevan, HSSR GA hratarakch'ut'yun.
33. Mat'evosyan K. (2010), *Momik*, Yerevan, Legal Plyus.
34. Mat'evosyan K. (2017), *Noravank'i vimagrere yev hishatakaranere*, Yerevan, Mughni hratarakch'ut'yun.
35. Mat'evosyan K. (2025), *Gladzori hamalsarani patmut'yunnic'*, Yerevan, Mughni hratarakch'ut'yown.
36. Mat'evosyan K., Zak'aryan L. (2010), *Momik manrankarich'*, *Albom-usumnasirut'yun*, Yerevan, Nairi hratarakch'ut'yun.
37. Manukyan S. (2011), *Anvanat'ert'erē Momiki tsaghkats dzeřagrerum, Momik-750: Hobelyanakan gitazhoghov- nvirvats Momiki tsnndyan 750-amyakin: Zekuts'umneri zhoghovatsu*, Yerevan, RA GAA Gitut'yun hratarakch'ut'yun, pp. 49–58.
38. Minasyan T'. (2024), *Grich' ev manrankarich' Mkhitar Anets'u kyank'ē ev dzeřagrakan zhařangut'yunē*, *Banber Matenadarani*, 38, Yerevan, pp. 133–145.
39. Mnats'akanyan S. (1968), *XIV dari hay k'andakagorts, chartarapet yev nkarich' Momikē*, *Patma-banasirakan handes*, 3, pp. 219–228.
40. Mnats'akanyan S. (1982), *Varpetats' varpetner: Manuel, Trdat, Momik*, Yerevan, HSSH GA hratarakch'ut'yun.
41. *Nor bargirk' haykazyan lezui (1836): Yerkasirut'yiwn yerits' vardapetats' yashakertut'enē Metsin Mkhitaray Abbahor H. Gabrieli Avetikyan, H. Khachatroy Siurmelian, H. Mkrtchi Avgerian: A (A-K)*, Venetik, S. Ghazar.
42. *Nor bařgirk' haykazyan lezui (1837): Yerkasirut'yiwn yerits' vardapetats' yashakertut'yene Mecin Mkhitaray Abbahor H. Gabrieli Avetikyan, H. Khachatroy Siurmelian, H. Mkrtchi Avgerian: B (H-F)*, Venetik, S. Ghazar.
43. Petrosyan H. (2011), *Momiki khach'k'arerē Momik-750: Hobel'yanakan gitazhoghov nvirvats Momiki tsnndyan 750-amyakin: Zekuts'umneri zhoghovatsu*, Yerevan, RA GAA Gitut'yun hratarakch'ut'yun, pp. 22–28.
44. Petrosyants' V. (1977), *T'eghenyats' vankē ev nra ařajnorderē*, Ejmiatsin: *Pashtonakan amsagir Amenayn Hayots' Kat'oghikosut'yan Mayr At'oroy Srboy Ejmiatsni*, 8, pp. 48–51.
45. Petrosyants' V. (1982), *T'eghenyats' vank'ē ibrev mshakut'ayin kentron, Patma-banasirakan handes*, 1, pp. 121–129.

46. Sargsyan G. (2008), *Vimagrakan Esk'izner: T'vakani grch'ut'yan norahayt dzev, Patma-banasirakan handes*, 2, pp. 94–119.
47. Sargsyan S. (2020), *Yeresnamiya Gladzori yerets' nakhordě, Region i mir, Obshchestvennij institut politicheskix i social'nyx issledovaniy Chernomorsko-Kaspijskogo regiona*, 4, Yerevan, pp. 48–54.
48. Vardanyan S. (2000), *Hayastani bjshk'ut'yan patmut'yun hnaguyn zhamanknerits' minchev mer orerě*, Yerevan, K'nnaser hratarakch'ut'yun.
49. K'alant'aryan A., Sargsyan G., Melk'onyan H. (2005) (1), *Momikyan norahayt hishatakner, Hay arvest*, 3, pp. 28–30.
50. K'alant'aryan A., Sargsyan G., Melk'onyan H., (2), *Norahayt hishatakagrer Momiki tohmi masin, Hayots' patmut'yan harts'er, gitakan hodvatsneri zhoghovatsu* 6, Yerevan, HH GAA Patmut'yan Institut, 2005, pp. 183–194.
51. K'yurduyan H., *ZhD daru manrankarich' Momiki masin, Patma-banasirakan handes*, № 2, pp. 203–204.
52. K'iwrtayan Y., *Dardzeal T'oros Taronets'i, Bazmavep*, 1947, 9–10.
53. K'ort'oshyan R. (2020), *Khach'en-Dorbatlii dambarani araberan ardzanagrut'yuně», Vardzk'*, HChHU, 14, pp. 36–40.